


1711



1913

2010

Աստուած

Հայ

Եւ

Արմենիա

ԲԱՌԵՐՈՒՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

— Հայ —

ԳՐԵՑ

Ա. Բ.



Կ. Պոլիս 1913

12.002

A large blue ink number "12.002" located to the right of the stamp.

Տպարան Գասպար

491.99-3
U-76

Աստուած

Հայ

Եւ

Արմենիա

ԲԱՌԵՐՈՒՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ԳՐԵՑ

Ա. Բ.



Կ. Պոլիս 1913

Տպարան Գասպար

ԱՍՏՈՒԱԾ ԲԱՌԻՆ

ԾԱԳՈՒՄԸ ԵԿ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Գիտունք ընդհանրապէս կը կարծեն թէ Հայ լեզուն Արիական լեզուն մէկ ճիւղն է, և գարձեալ աւմական լեզուն գրոշմը ունի իր մէջ, և արդարեւ հայ լեզուն թէ սիմական և թէ արիական լեզուներու գրոշմը ունի, բայց և այսպէս եթէ նկատի ունինք հայ լեզուին կազմութեան ձեւը, պիտի համոզուինք թէ բոլորովին ինքնուրոյն և անջատ լեզու մէն է: Ուրեմն երկու կերպ ենթաղրութիւն կրնանք ընել հայ լեզուի մասին, առաջին հայ լեզուն երկու լեզուներէն ծագում առած կրնայ րլալ քաղաքական կամ ուրիշ տեղական պատճառներով, և երկրորդ ինչ որ հաւական է թերեւս երկու լեզուներուն ծնունդ տուած կրնայ ըլլալ:

Հայ լեզուին կազմութեան մէջ զարմանալիօրէն նկատի առնուած են բնութեան տեսարանները, իրերու ընթացքը, նիւթերու կազմութիւնը և անոնց ծագումը: Նաև կենդանի և ականատես պատճութիւն մէն է, մեր ծագման և քաղաքակրթութեան պատճութիւնն է մեր կրօնքներուն և յայտնապէս մէն մի բառով, բացրոշապէս ի յայտ կուգան մեր ունեցած պարբերական կրօնքները:

Մաքոր և ընդարձակ լիճի մը կը նմանի հայ լեզուն, որուն մէջ կ'երեւայ մեր նախահարց ծագումը, անոնց քաղաքակրթութիւնը, անոնց պաշտած Աստուածը, և գարերու հուշվումով յառաջ եկած փոփոխակի կրօնքները, անոր մէջ նայողը կը տեսնէ մեր նախնիքը, եկած զացած բոլոր ցեղերուն զլուխը կանգնած, իր ուղեղացին և բնախօսական հանգամանքով, յօրում ի յայտ կուգան մեր



39260-67

5256.8-66-1
5

Այս խորհրդաւոր և սքանչելի լեզուին ամէն մէկ բառ պատմութիւն մըն է, ինչպէս Աստուած բառը իսքնին ամբողջ Աստուածաբանութիւն մըն է. Հայ բառը մարդարանութիւնն իսկ է, և նմանապէս Արմէն բառը։

Այժմ գանք հայ լեզուին ծագման և ստուգաբանութեան, հայ լեզուին գաղանիքը կը կայսարաց հնչումներու դասակարգութեան մէջ, մեր լեզուին մէջ հնչումները մասնաւոր գերունին և կը կազմեն մասնաւոր բառախումբեր, որոնք յետոյ միմիանց միանալով կը բացատրեն զանազան իմաստներ։

Այժմ տեսնենք թէ ինչպէս ծագում առած է Աստուած բառը և որով պիտի համոզուինք նաև թէ մեր նախնիք ինչ բառը և որով պիտի համոզուինք նաև թէ մեր նախնիք ինչ բառը գաղափար ունէին Աստուածոյ մասին։ Աստուած բառը կազմուած է Ա. Տ. և Ծ. հնչումներէն։ Նախ պարզենք Ա հընչումին ունեցած գերը մեր լեզուին մէջ, Ա հնչումն կը կազմուի նախ ես գերանունը, և դարձեալ Այս բառը որ կը նշանակէ ողի կամ հրեշտակ, որոնք մեր նախնեաց համար կազմակերպուած էակներ էին անտեսնեի, և բոտ կամ տեսանելի՝ այսպէս ես գերանունը և այս բառը զիրար կը լրացընելի՝ այսպէս ես գերանունը և այս բառը զիրար կը լրացընեն և իրարու հետ առնչութիւն ունին, իբր թէ ամէն ես իր մէջ այս մը ունի։ Ահա այս երկու բառերը պրամատ մասնիկներն են և հնչումին որմէ կազմուած ամբողջ բառախումբը հոգեկան վիճակ կ'արտայայտեն, ինչպէս ասել, խօսել, լսել, տեսանել, նաև լոյս, յոյս, սէր, սիրո և սուր որ կը նշշռնակէ գլուխ, և դարձեալ այս հնչումն կոզմած էն մեր նախնիք Ասիա, Մասիս, Սօս, Սիւնիք, արուեսակ, ասոլ բառերը։ Ամէն կրօնքներու մէջ ընդհանրապէս Աստուածոյ կը վերագրուի մարդուս ասելու, խօսելու, տեսնելու և լսելու պարզեւումը, և մասնաւորապէս միաստուածութեան մէջ Աստուածը կ'ընդունուի ամենութիւք, և որ ամբողջ տիեզերքը կը պարունագուն մէջ, ահա այս պարբերութիւնը կը պարունակուի հայերէն լոյս կէ. ահա այս պարբերութիւնը կը պարունակուի հայերէն լոյս կէ. լոյս՝ կը կազմուի իլ և այս բառերէն, և ծագում առած է այսին լիութիւնը իմաստով։ և որովհետեւ «այս» Աստուած բառին արմասն է կ'ըմբոնուի Աստուածոյ պարունակութիւնը կամ լիութիւնը։ Ասկէ կը հնտեւցնենք նաև թէ նակութիւնը կամ լիութիւնը։

Ասիա բառը նախապէս ծագում առած է տիեզերք իմաստով։ Այսինքն Ասիա բառ են աշխարհին կամ տիեզերքին իրը այսին պարունակութիւնը, և ասիկա բնական է քանի որ տակաւին աշխարհագրական բաժանում չէին գիտեր, ուրեմն իրենց բնակած երկրին ամենաբարձր լեռան Մասիս անունը տուին իրը այս երու բնակարանը, և այսպէս ըլլալուն ապացոյց կրնանք համարի Սօս բառը որ իրեւ Մասիսի մանրանկարը կը համարէին անտառներ տնկերով և այսերուն նուիրելով։ Բայնք թէ հայերէն լեզուին մէջ նկատի առնուած են ընութեան տեսարանները և կազմութիւնը. անա այսպէս այս բառերուն մէջ բացորոշ կ'երեւայ. ինչպէս թէ Ասիա. լոյս, և Աստուած միւնչոյն ծագումը ունին և տիեզերքի պարունակութիւնն են, ուրեմն ինչպէս որ նիւթիր կը լուծուի և կը կազմուի և ամէն մարմին կը կազմուի տիեզերական նիւթէն, նոյնպէս ալ մարզը, իբ ասելու, խօսելու, լսելու և տեսանելու կարողութիւնն ալ կ'ընդունի Աստուածմէ, որ տիեզերքին պարունակութիւնն է։

Գանք այժմ Տ հնչումին, այս հնչումին արմաս մասնիկն է ափ բառը, որմէ կազմուած բառախումբը ընդհանրապէս շրջան բացատրող իմաստներ կը կազմեն, ինչպէս անզ, տարածութիւն, տեւել, նեսել են. բառերը։

Բնութեան մէջը այն տեսարանները որոնք շրջան մը ունին ընդհանրապէս տ հնչումով կը բացատրուին. ինչպէս արեգակը, տեւողութիւն կ'ըսենք արեգական շրջանին, և երբ իբ ամենաբարձր կէտին կը հասնի կ'ըսուի ափ, և իբ անկումի և կամ վերջաւորումի պարագայէն ծագում կ'առնէ առ մասնիկը, որ հայերէնի մէջ ընդհանրապէս անկում և վերջաւորում իմաստը կուտայ բառերուն, և այս առ մասնիկին անկում և վերջաւորում իմաստ տուողն ալ ա՛ ձայնաւորն է, ինչպէս ան՛ և առ մասնիկներուն մէջ ալ յայնի կ'երեւայ։ Դարձեալ տիեզերք կ'ըսենք արեգական շրջանին մէջ պարագակուած տեւողութեան և տարածութեան։ Այսինքն շրջանին եղբերը տեսանել կ'ըսենք երբ իբի մը գոյութիւնը մտովի կ'ըմբոնենք, և այդ իբին և մար մէջ շրջան մը կազ, և այդ

շրջանը կր վերաբերի «այս»ին կամ ևսին, և որուն կարողութիւնը կ'ընդունինք այս էն, և հակառակ պարագային եթէ զայն մեր ոչքէն ծածկող առարկայ մը գտնուի տեսութիւնէն կը զրկուինք և մատծելով միայն կրնանք բմբանել: Դարձեալ տի շրջանն է նաև մարդուն կեանքին որ նախ կ'ըլլայ տղայ, և երբ չափահաս կ'ըլլայ կ'ըսուի տիար կամ տէր, և երբ ընտանիք կազմէ, այսինքն տ'ր մը տիկին մը և տղայ մը ըլլան՝ կ'ըսուի տուն, տրեմն առն բառն ող կազմուած է տի արմատէն բարյական իմաստով որ յետոյ նիւթական շէնքին ալ տուն բատ են:

Այսպէս այն ըոլոր բառերը որոնք մնծ կամ փոքր շրջանի իմաստը ունին կազմուած են ա հնչումէն, շրջան մ'ն է տարին, իսկ սնհունին իմաստը բացատրելու համար կազմուած է յատիան բառը, փոքր շրջան մը տեղի բառը, նաև նետ կամ նետել բառը: Առնենք նա դերանունը կազմող ն հնչումը և կամ ներկայ բառին ն հնչումը և զայն միացնենք տեւել բառը կազմող տ հնչումին՝ կ'ունենանք նետել բառը, որ շրջան մը այսինքն լայն կամ ներկայն տեսողութեան մէջ կը դնենք: շրջան մ'ն է դիտելը, ինչպէս երբ բան մը կը դիտենք տեւողութիւն մը կամ շրջան մը կայ անոր և մեր միջեւ, առնենք դէմ կամ դիմացը բառին դ հնչումը և անոր միացնենք տեսանել բառին ա հնչումը կ'ունենանք դէտ կամ դիտել բառը, և դիմացինը տեսանել իմաստը կ'ըմբռնենք:

Բանք թէ արեգական շրջանին անկումէն յառաջ կուգայ ատ մասնիկը, և մարդուն շրջանի հասուն միջոցին տէր բառը, ուրեմն կրնանք հետեւցունել թէ ատը կամ ատրունի բառերէն յառաջ կուգան ատրուշն և մատուռ բառերը, ատը կամ ատրունի դիցարանական բառ մը ըլլալու էր մեր նախ նեաց նամար ինչպէս որիշ ազգեր կ'ընդունէին ասառուածացեալ դիցազներ, և ատը կամ ատրունի հայերէնով կ'ասու- գարանուի տիարութեան անկումի շրջանը կամ ծերութիւնը, բայց հասարակ մօրդիկ թէեւ ծերանալով կըմենէին, բայց քաջնը ատը կամ ատրունի կ'ըլլային, և կ'ասուռ ածանային, որոնց համար ատրուշն և մատուռ կը կանգնէին, ինչպէս

այժմ ալ մատուռները մեղի համար սուրբերու գերեզմաններ են, թէեւ ունինք տաճար և մեհեան բառերը: Բայց անոնք տարբեր շրջաններու կր վերաբերին և ինչպէս տաճար կը վերաբերի միաստուածութեան շրջանին, որ ամենահին կրօնքն է մեր նախնեայ: Տաճար կը կազմուի տի և ճար մասնիկներէն, տի շրջան մըն է իսկ ճար ճառ բառին հոմանիշ է ինչպէս հանձար բառին մէջ ալ կ'երեւայ: Ուրեմն տաճար կը նշանակէ ճառի կամ քարոզութեան տեղ կամ շրջան, հետեւաբար տաճարները ոչ դիցազներու նուիրուած էին և ոչ ալ անոնց մէջ աւելորդապաշտական բան մը կար ինչպէս հուրը:

Ասառուած բառին կազմութեան մէջ դեր ունի նաև և տառը որ վ հնչումը կուտայ, վ հնչումը հայերէնի մէջ բառերը գործիական հոլով կը շինէ, թէեւ աւելի ճիշգը կ'ըլլար լրական հոլով ըսել: Ուրեմն տիւ բառը տի մասնիկին գործիական հոլով ձեւն է այսպէս վել հնչումը այն բառերը կը կազմն որոնք լրումը կամ վերջին կէտը կը ցուցնեն: ինչպէս վեր բարձրութեան լրումն է, վար ցածութեան լրումն է, վերջ ժամանակին լրումն է, վէմ ամրութեան կամ հարասութեան լրումն է: Վեհ ունինք վ հնչումը և զայն միացնենք հայ անունին հետ կ'ունենանք վեհ բառը որ կը նշանակէ հայութեան լրումը կամ ամենաբարձր հայը, նոյնպէս ալ վատ կը նշանակէ ստորնութեան լրումը, անկումի լրումը, նոյնպէս վ հնչումը բարձրութեան իմաստը կուտայ նաև աւելի՝ յաւիտեան, հաւատք ևն բառերուն մէջ: ահա հիմա տեսանք այս և տիւ բառերուն իմաստը որոնցմով կը կազմուի ասառուած բառը և գանք ծ հնչումին որ վերջին հնչումն է:

Ծ հնչումին դերն է իրին երկու վերջնական եզրերը որոշշել, ինչպէս ծագ, և ծայր, առնենք ծ հնչումը և զայն միացնենք գոյութեան բառը կազմող գ հնչումին, կ'ունենանք գոյութեան եզրը կամ սկիզբը, դարձեալ ծ հնչումին միացնենք իր բառին ը հնչումը կը նշանակէ իր-ին կամ եղածին եզրը այսինքն վերջին եզրը, նոյնպէս ծեր կ'ըսենք երբ ալը կամ մարդը իր կեանքին վերջին եզրին հասած է, ունինք ծ հնչումը և զայն միացնենք նա կամ ներկայ բառին ն հնչումը կը

նշանակէ ներկայութեան եղբը . և ծնունդը կամ ծնանին է ներկայութեան սկիզբը կամ առաջին եղբը :

Ծ հնչումին գերը յայտնի կ'երեւայ նաեւ մեծ բառին մէջ . մի կը նշանակէ բաժանումի ամենավերջին ամբողջութիւնը , ինչպէս մի է արեգակը , և դարձեալ մի է աւազի մը ամենանուրբ հատիկը . ուրիմն ամէն ամբողջութիւն իր տեսակին մէջ մի է , ինչպէս մի է ամէն աւազ , բայց անոնց տարբերութիւնը ցուցնելու համար կ'ըսենք մեծ աւազ կամ կ'ըսեն այս աւազը միւսէն մեծ է . նոյնպէս արեգակը թէեւ մեծ է , բայց իր տեսակին մէջ մի է , որովհետեւ թէ ծաւալով և թէ տարածութիւնով անէ մեծ արեգակներ կան , ուրիմն միան միւսէն տարբերութիւնը ցուցնելու համար կ'ըսենք թէ մին միւսէն մեծ է :

Բայնք թէ մի բառը իրին ամենավերջին բաժանումն է , ինչպէս մուր կ'ըսենք այն ամենանուրը հատիկներուն որոնք այրումէն յառաջ կուգան , որոնք ըստ ինքեան անտեսանելի են , բայց երբ անհամար և անթիւ մուրեր երբ մէկաեղ գան կ'րլ լայ սեւ կէտ մը , ուրիմն մուր բառը կը կազմուի մի և իր մասնիկներէն և կը նշանակէ իրին բաժանումը , այսինքն հիւէ : Առնենք մի բառը և անոր միայնէնք գոյութիւն բառը կազմող գ հնչումը կ'ունենանք մէգ բառը , ինչպէս ջուրը գոյութիւն մըն է . բայց երբ միւրու կը բաժնուի կ'ըլլայ մէգ , ուրիմն մէգ ջուրին ամենանուրը հատիկներու վերածուին է : Բայնք թէ Ասիա բառը տիեզերք իմաստով կազմուած բառ մըն է . ուրիմն առնենք մի բառը և անոր միայնէնք Ասիա բառը կազմող սնչումը . կ'ունենանք մասն բառը որ բաժանում մըն է : Ինչպէս Եւրոպա մասն է երկրին և հետեւածքար . ահա տեսանք թէ մի բառէն և կամ հնչումէն կազմուած բար . ահա տեսանք թէ մի բառէն և կամ հնչումէն կազմուած բառ . բայց ամենավերջին կէտը ցուցնելու համար մի լան կամ մեծ , բայց ամենավերջին կէտը ցուցնելու համար մի հնչումին վրայ կ'աւելցնենք ծա հնչումը որ կ'ըլլայ մեծ . ու այս բառով կը բացատրենք միանալիք աւազին ծա հնչումը որ կ'ըլլայ մեծ . ու այսաւող բառին կրճատումը կը թուի , իրը թէ հոն կը լրանայ այսին և լոյսին վերջաւորումը որոնք հաստատուած են վէմին վրայ . որմէ ծագում կ'առնէ առաստաղ բառը :

Այժմ առնենք այս բառը որ ոգի կը նշանակէ և որմէ

կ'ընդունինք մեր ասելու , լսելու և տեսնելու կարողութիւնները և կ'ըլլանք են , և այս բառին միացնենք տիւ որ տարածութեան , ահւողութեան վերջին կէտն է . ու անոնց վրայ աւելցնենք ծ հնչումը կ'ունենանք Աստուած բառը և կ'ունենանք իմաստ մը որ կը նշանակէ ամենամեծ եօր , ես մը որ կը բովանդակէ տիեզերքը :

Ուրիմն այսպէս կ'ըմբռնէին մեր նախնիք Աստուածը ինչպէս կ'ըմբռնէն այժմ ամէնէն հմուտ և զիտուն աստուածարանները , այսինքն Աստուած լոյս է , տիեզերքը լիացնողն է մէր է , սկիզբն է , ստեղծող է , և անկէ կ'ընդունինք մեր հոգեկան կարողութիւնները , մեր ասելը լսելը տեսնելը :

Սեւ և աստղ բաւելն ալ կազմուած են ս հնչումէն կամ այս բառէն սեւ կազմուած է տիւ բառին ձեւով , սյս բառէն կը կազմուին Ասիա և լոյս բառերը որոնք տիեզերքին պարունակութիւնն են , իսկ սեւ կամ սեւ ծագում կ'առնէ իրը թէ այլեւս լոյսը կը դադրի , կամ լոյսին վերջին կէտն է և հետեւապէս սեւ գոյն առած է , և անկէ վեր վէմ է արսինքն հաստատութիւն , և այս վէմին վրայ հաստատուած են աստղերը , որ այսաւող բառին կրճատումը կը թուի , իրը թէ հոն կը լրանայ այսին և լոյսին վերջաւորումը որոնք հաստատուած են վէմին վրայ . որմէ ծագում կ'առնէ առաստաղ բառը :

Նկատելի է որ թարգմանիները այսը շփոթած են դեւ բառին հետ և այսահար ու զիւհանար բառերը կը կը գործածեն միւսնոյն իմաստով . բայց այսերը իրը բարի ոգիներ իսկ գեւերը իրը չար ոգիներ էին մեր նախնեաց համար , որովհետեւ արեւելքի մէջ բարի և չար աստուածներու աւանդութիւնը կար ինչպէս կը տեսնուի Եղիշէի զրուածոյ մէջ , որոնց մին բարիները կամ այսերը ստեղծեց իսկ միւսը չարերը կամ զեւերը ստեղծեց . նաեւ սուրբ զրոց մէջ ալ թէեւ ստեղծագործութեան մէջ բացորոշապէս չախնարկէր զեւերու և հրեշտակներու , բայց Աստուածոյ և մարդոց որդիքքը ակնարկութիւն մը կայ , որոնց միաւորումէն հսկաներ ծնան . ասոնք անշուշտ գեւերը և հրեշտակները չին որովհետեւ սուրբ զիւհանքը կը սէ

թէ անոնք սեռ չունին . ուրեմն հիմա բացատրենք թէ ինչպէս ծագում առած են այս և դեւ բառերը , և թէ ինչպէս ծագում առած են Առառեծոյ և մարդոց որդիք աւանդութիւնը :

Այս և, դեւ բառերը ծագում առած են և դու դերանուններէն . ես դերանունը բացատրեցինք արդէն . իսկ դու դերանունէն գ հնչումէն կազմուած բառերը միշտ դիմացի մը կամ երկրորդի վերաբերութիւն ունեցող բառախումքը կը կազմէ , ինչպէս գէմք դիմաց , հանդիպիլ դիպիլ են բառերը , այս հանգամանքով իրբեւ դիմացինը կամ երկրորդը ստորին համարելով ստորնացուցիչ բառերը կազմուած են . նոյնպէս գ հնչումէն , ինչպէ՝ դոյզն , դու , դեր , դի , դեւ , դժնդակ , դժոխք , և այն բառերը ստորնացուցիչ հանգամանք ունին . հետեւաբար մեր նախնիք ինքզինքնին ասիական կամ աստաւծոյ որդիք կը համարէին , իսկ չըտակայ կամ հեռաւոր ցեղերուն Դուրանեանք կամ Քուչանանք անունը տուած են . և ասկէ ծագում առած ըլլալ կը թուի սուրբ դրոյ այդ աւանդութիւնը :

Առնենք դու և դեւ բառերը կազմող գ հնչումք և անոր միացընենք ոզն կամ ազգ բառը կազմող գ հնչումք՝ կ'ունենանք դոյզն բառը որ կը նշանակէ Դուի ցեղ կամ սասրին տեսակ , նոյնպէս դժոխք բառը կրնանք ստուգարանել դուերու կամ դեւերու ժողովք . թէեւ դրախտ բառն ալ գ հնչումք ունի , բայց հաւանաբար դրահաս կրնայ եղած ըլլալ , իրը դուրս հանուած իմաստով , ինչպէս դուրս բառն ալ երկրորդի մը կամ դիմացի մը կը վերաբերի . միաստուածութիւնը արեւելքէն ծագում առած ըլլալուն ապացոյց է նաեւ Յորայ գիրքը . Յորին աստուածը Մովսէսի Ե՛ռվայէն տարբերէ . Մովսէսի Ե՛ռվայն խարոզ եղած է և իրեն ժողովուրդ մը միայն ընարած է , և այս պատճառաւ աւար , կողապուտ և սպանութիւն և նոյն իրկ բարոյական ոճիրսեր կ'արդարանան անոր աչքին , իսկ Յորայ գրքին մէջ բոլոր մարդիկ հաւասար կը նկատուին և ամէն յանցանք կը դատապարտուի . ուրեմն կը հետեւի թէ մեր նախնեաց միաստուածութիւնը աւելի մաքսր

էր քան մովսիսականը և ասիկա կ'ապացուցանէ տաճար բառն ալ . բայց մեր նախնիք Ե՛ռվան ալ ճանչցած են Մովսէսի յարտնութենէն չատ դարեր յառաջ . և իր անունը տուած է անոնց , որուն համար մեհեաններ շինած են յորում նուիրական էր հուրը , ինչպէս մովսիսական կրօնքին մէջ . որով կը հետեւի թէ եան կամ ենովա . Հայկ հայ , միհեան և հուր բառերը առնչութիւն ունին :

Սրդ , անցնինք հայ բառին ստուգարանութեան :

Բ.

ՃԱՅ ԵՒ ՀԱՅԿ ԲԱՌԵՐՈՒՆ ԾԱՌՈՒՄԸ ԵՒ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայ և Հայկ բառերը ծագում կ'առնեն և հնչումէն , հետեւաբար և հնչումէն կազմուած , բոլոր բառերը վերլուծելով պիտի համեստ այս բառերուն իմաստը :

Բայց անէք առաջ հարկ կը զգանք Խորենաց ոյն աւանդութիւննեան մասին քանի մը խօսք բայէ՝ Խորենացին կ'աւանդէ թէ Հայկ անուն մէկի Բէլ անուն բանաւորէ մը ապատամբելով դէսի Արևելք չուեց , և յետոյ անոր հետ պատերազմելով սպաննեց զայն ու իր իշխանութիւնը հոն հաստացեց , և այս պատճառաւ այդ երկրին բնակիչները հայ բառեցան իր անունէն առնելով , կրնանք ընդունիլ թէ ասիկայ ազգային աւանդութիւն մը եղած ըլլայ . և այսպիսի պատերազմ մը գոյութիւն ունեցած ըլլայ , երկու երկիրներու կամ ցեղերու միջեւ :

Իսկ գալով այն մասին որ Հայկին ազգարանութիւնը կ բնէ և զայն Թորգոմայ որդի կ'անուանէ , իրը թէ սուրբ գրոց մէջ յիշուած Յարեթի սերուղէն եղած ըլլայ , և հետեւաբար Ներքովիթի Ժամանակակից , ասիկա կ'երեւայ թէ վերը միշուած ազգային աւանդութիւնը սուրբ գրոց համաձայնեցնելու համար էր , որովհետեւ մեր նախնիք բառն փափաք մը ունեցան քրիստոնէութիւնը լնդուննէ յետոյ չնջել ամէն ինչ որ նախն կրօնքին կը պատկանէր :

Նաեւ Ասունացին կ'աւանդէ թէ Մարիբաս կատինա
անոն ուղիւ մէկը Նինուէի զրատան մէջն գտաւ մեր ազգին
պատմութիւնը, ասկէ կ'երևէի թէ Նինուէի զրատան մէջ պահ-
ուած մատեանը Մովսէսի հնդամատեանին պէս ազգերու ծագ-
ման և անոնց բաժանման վրայ կը խօսէր, և շատ հաւանա-
կան է նաեւ որ Մովսէս անկէ քաղաք րլայ իր աւանդութիւն-
ները, բայց մնաք հաս Բէլ և Հայկ անունները ստուգաբաններք
հայերէնով, Բէլ ծագում կ'առնէ բուն բառը կաղմող բ հըն-
չումէն և լինիլ բառը կաղմող լ հնչումէն՝ և կը նշանակէ բուն
եղած, իսկ Հայկ կը նշանակէ էութիւն յաւիտենախան գոյու-
թիւն, դոր պիտի բացատրենք:

Հ հնչումէն կը կաղմուին. հող, հաց, հանել, հիմ,
հուր, մեհեան, համ, համայնք, հեղ, վիճ, նահատակ, նահա-
պետ, նահանգ, հանձար ևն, բառերը:

Հող կը կաղմուի հ հնչումէն և ող մասնիկէն, և կը նշա-
նակէ հանող. կեանք տուող գոյացնող, հանել կը նշանակէ
կեանք տալ գոյացնել, որմէ կը կաղմուի հաց բառը, ինչպէս
թանալէն թաց, և բանալ բառէն բաց բառերը ծագում կ'առ-
նեն, բանալ կը նշանակէ բունը մէջտեղ հանել, և բաց կը
նշանակէ բուն ին ցուցումը, կամ երեւումը, նոյնպէս ալ հաց
կը նշանակէ գոյութեան ցուցում, կամ երեւումը: Հին կը
կաղմուի հ հնչումէն և նա գերանունին կամ ներկայ բառին ն
հնչումէն և կը նշանակէ նա որ գոյութիւն ունէր, և անա
գոյութիւնը ներկայ է: Հիմ կը կաղմուի հ հնչումէն և մի
բառը կաղմող մ հնչումէն և կը նշանակէ գոյութեան սկզբնա-
ւորութիւնը, ինչպէս մի թիւերու հիմն է, և առաջին քարը
զոր կը դնեն շնչք մը շինելու համար անոր գոյութեան հիմն է:

Համ կը կաղմուի Հայ բառէն և մ մասնիկէ, և կը նը-
շանակէ հայերու ամբողջութիւն, կամ ցեղ, և ասիկա կը կաղ-
մուի արմ բառին պէս, որ կը նշանակէ ցեղ, և յայտի է որ
մնաք թէ ար կըսուինք և թէ Հայ:

Համ և հիմ բառերուն տարբեր իմաստը կը կայանայ ի և
ա ձայնաւորներուն մէջ, որովհետեւ ա ձայնաւորը ինչպէս ատ
մասնիկին մէջ բացատրեցինք անկումի և վերջաւորումի ի-

մաստը կու տայ, այնպէս՝ ամ և ար բառերուն մէջ վերջաւո-
րումի իմաստը կու տայ, ինչպէս մի բաժանում կը ցուցնէ, իսկ
ամ, բաժանումէ վերջաւորութիւն կամ արգելում և կը կաղ-
մէ ամբողջ բառը, ինչպէս՝ ազգի մը ամեն անհատները մի են
իսկ բաժանումէ արգիլնը, կ'ըլլան ամ, համ, համայնք և
ամբողջութիւն: Եղնապէս, իր կըսուին այն ամէն տեսանելի և
չօշափելի նիւթերը առանձինն, որուց միանալէն մարմին մը կը
կաղմուի, ինչպէս՝ իր են այն աւազի նուրբնա տիկները առան-
ձինն, իսկ միացած և ամբողջութիւն մը կաղմուածը կըսուի
քար, և կամ մարմին: Ուրիմն ար կը նշանակը եղած և որմէ
կը ծագի երել բառը: Հուր բառին մէջ աւելի որոշ կ'երեւաց
հայ բառին իմաստը, որովհետեւ երկուքն ալ հ հնչումով կը
սկսին, և հուրը նուրիբական էր ու կը պաշտուէր միր նախ-
նիքներէն, և յետոյ հուրին պաշտաման վայրին մեհեան կըս-
ուէր որ գարձեալ հ հնչումէն կը կաղմաւի, դարձեալ հուրը
մովսիսական կրօնքին մէջ ալ նուրիբական էր. հուր կը կաղ-
մուի հայ և իր բառերէն և կը նշանակէ կեանք տուող իր
կամ յաւիտենական գոյութիւն ունեցող իր, և այս բառին ի-
մաստը աւելի լաւ բացատրելու համար պէտք կըդգան միեւ-
նոյն ձեւով իր բառէն կաղմուած որիշ երեք բառերու հետ
բազգաւաել զայն. որոնք են՝ մուր, ջուր և բոյր:

Մուր կը կաղմաւի մի և իր բառերէն, մի՝ ինչպէս ըսինք
բաժանում ցուցնող բառախումբը կը կաղմէ, և գարձեալ իր
բաժանումի հանգամանքով գոյութեանց սկզբնաւորութիւն
կու տայ, այնպէս՝ մուր կը նշանակէ հիւլէ, արսինքն թէ
լուծուած մարմինի ամենանոր հատիկները, և թէ կաղմուած
մարմինի մը նախնական հատիկները, և հուրն է որ մարմին-
ները թէ կը լուծէ և մուրի կը վերածէ: և թէ զայն խտացնե-
լով մարմինի կը վերածէ, և այս լուծումը և կաղմաւթիւնը
բացատրելու համար գարձեալ հ հնչումէն կաղմուած են երկու
բառեր համ և ման. համ կաղմութիւնն է և ման լուծումը:

Զուր կը կաղմաւի ջինջ բառը կաղմող չ հնչումէն և իր
մասնիկէն: Զուրը տիեզերքի գլխաւոր նիւթերէն կամ իրերէն
մին է և սկսուած է ջինջ վիճակի մէջ, և այդ ջինջին խտա-
ցումը եղած է երկրի վրայ ջուր:

Բոյր կը կազմուի բուն կամ բնութիւն բառը կազմող ք հնչումէն և իր մասնիկէն, և որ հիւթ բառով ալ կը բացատրուի:

Մուրը և ջուրը կը կազմին մեռեալ կամ անդործարան մարմինները, իսկ հուրը և բոյրը կը կազմին բուսականութիւնը և գործարանաւոր մարմինները. այսու ամենայնիւ, մեռեալ կամ անդործարան մարմիններու մէկ մասին մէջ կը զանուին նաև առատ հուր և բոյր ինչպէս դիւրավառ հանքերը որոնք թէ հուր ունին և թէ բոյր, և գարձեալ բուսականութեաններն, և գործարանաւոր մարմիններու մէջ կը գտնուին առատ ջուր և մուր:

Հուրը և բոյրը հիւթ բառով ալ կը բացատրուին, իսկ մուրը և ջուրը նիւթ բառով կը բացատրուին:

Հիւթ կը կազմուի հայ բառը կազմող հ հնչումէն և թ մասնիկէն, թ հնչումը հայերէնի մէջ ամբողջութիւն իմաստը ունեցող բառերը կը կազմէ. ինչպէս՝ թիւն մասնիկը. զոր օքինակ, մարդկութիւն ըսելով կ'իմանանք մարդոց ամբողջութիւնը նոյնպէս բուսականութիւն ըսելով կ'իմանանք բոյսերու ամբողջութիւնը. և ասկէ ծագում առած են թի, թիւ և թիւ բառերը. թի նախնական ժամանակներու մէջ իրր չափ մը, և որոշ ամբողջութիւն մըն է, զոր օքինակ թի մը ցորեն, թի մը ալիւր, կամ թի մը գարի, չափ մըն էր այն նախնական ժամանակներուն մէջ. երբ ոչ կը մը կար և ոչ ալ որիշ չափեր, նոյնպէս, թիզ նախնական չափ մըն էր բը նութիւնն պատրաստուած, և առշուշա թիզով կը չափէին, և թիզն ալ որոշ ամբողջութիւն մըն է: Նոյնպէս թիւ ամբողջութիւն նութիւն մըն էր իր հինգ մատներով. թիւ ամբողջութիւն մըն է, ինչպէս տասը, հարիւր հազար թիւերը որոշ ամբողջութիւններ են:

Այսպէս հիւթ կը նշանակէ զոյութեանց կամ կեանք տուող իրերու ամբողջութիւն, իսկ հիւթ կը կազմուի նագերանունէն և թ հնչումէն և կը նշանակէ նա-երու կամ ներկաներու ամբողջութիւն, և նաերը և ներկաներն են ամէն կաներու իրերը և առարկաները. մինչդեռ հիւթերը մտովի տեսանելի իրերը և առարկաները.

միայն կրմբոնենք, ինչպէս՝ աղի, թթու, լեղի, կծու, անուշ և այլն բառերը:

Այսպէս, հիւթ կը սուլին անոնք որ կեանք կուտան, և նիւթ կ'ըսուլին անոնք՝ որոնցմէ կը կազմուի տեսանելի և շօշափելի մարմինները:

Եւ այս հիւթ բառէն դարձեալ հ հնչումով կը կազմուին երկու բառեր համ և հոտ: Ինչպէս թէ՝ հիւթը ջուրին ազդեցութեան տակ հոտ յառաջ կը բերէ: Ահա կը տեսնուի թէ ինչպէս հ հնչումէն կազմուած բառերը գոյութիւն՝ էութիւն՝ և կեանքի անմիջական պէտքը ունեցող բառեր կը կազմն. ինչպէս՝ հանել, հող, և հայ, ըսած էինք թէ հայ բառը հանել բառէն այնպէս կազմուած է, ինչպէս բանալ բառէն բաց և թանով բառէն թաց բառերը. զոր օքինակ՝ բանալ, կը նրաշանակէ բունը մէջտեղ հանել և կը կազմուի բուն կամ բնութիւն բառերը կտղմու թ հնչումէն, ուրիմն երբ բուն իրը առարկա ի մը տակ ծածկուած է և գայն կը վերցնենք, կրլաց բաց: Դարձեալ, թանալ որ կազմուած է թ հնչումէն և հետեւարար թի արմատէն, սապէս կը բացատրուի ինչպէս թի մը մոծանելի նիւթ, երբ շաղենք կըլլայ թաց և ամբողջութիւն մը կը կազմէ:

Նոյնպէս հան ը կամ հանուածք որ հողը այսինքն զոյացլնողը կամ կեանք տուողը կը հանէ, զոր օքինակ ցորենը որ արիւր կը շնուրի և երբ չափ մը կամ թի մը ալիւր շաղենք կ'ըլլայ հաց:

Մինչեւ ցայծմ լիզուաբաններու կարծիքը այն է թէ հաւյերէն հաց բառը առնուած է պարսկերէն աշ բառէն, և արդարեւ պարսկերէն շատ բառեր կան որ հայերէնի մէջ ց հընչումով կը կազմուին և միեւնոյն իմաստը ունին, ինչպէս խուրշիտ հայերէնի մէջ հրացայտ. ճէմշիտ հայերէնի մէջ գիտութիւն ցայտող, աշիքեար հայերէնի մէջ բացարձակ, շէն հայերէնի մէջ ցանք այսինքն մշակուած, բայց և այնպէս հուր բառը այնպիսի կապ մը ունի հայ լեզուին հետ որ կարելի չէ տարակուալ թէ զուտ հայերէն ծագում ունեցած չըլլայ, և գարձեալ ճէմշ որ թէեւ հայերէնի մէջ գործածական չէ իրը

գիտութիւն իմաստով բայց հայերէն լողուի կանոնին համեմատ ստուգաբանուելով կը նշանակէ գիտութիւն։ Որովհետեւ և հնչումէն կազմուած բառերը գիտութիւն և լոյս արտայայտող բառախումբը կը կազմէ, ինչպէս ճիշդ, ճշմարիտ, ճրագ, ճառք, ճանչ, ճառագայթ, ճանապարհ, ճանաչել, ճառ, ճոր, են.՝ բառերը։

Ճանապարհ կը կազմուի ճանաչել բառին ճան մասնիկէն և պար բառէն, ճան կը նշանակէ գիտութիւն, իսկ պար կը նշանակէ ոտք, կամ քալել, այսպէս ճանապարհ բառը կը նշանակէ ոտքին տեղը կամ քալելու տեղը գիտցնող, և այս ճան, ճիմ, ճառ բառերը կը կազմուին, բան, բեմ, բառամասնիներուն պէս, ինչպէս բան կը նշանակէ խօսք, բեմ կը նշանակէ խօսքի ընդունարան, կամ խօսելու տեղ, իսկ բառ կը նշանակէ խօսելու ձեւաւորում կամ կազմաւորում։ Այսպէս ալ ճան կը նշանակէ գիտութիւն, ճեմ կը նշանակէ գիտութեան ընդունարան կամ գիտութեան տեղ, իսկ ճառ կը նշանակէ, գիտութեան ձեւաւորում կամ կազմաւորում. աճապարել կը նշանակէ առանց գիտութեան քալել, որով ա ձայնաւորը ինչպէս բառծ ենք զորի իմաստը կուտայ բառերուն, ինչպէս առ, ան և ապ մասնիկներուն մէջ կ'երեւալ, առ կը նշանակէ առանց անուզութեան. ան կը նշանակէ առանց նախ, զոր օրինակ անկար կը նշանակէ առանց կարողութեան, անցանել կը նշանակէ առանց ցուցուելու մնալ, զարձեալ ապ կը նշանակէ առանց ապագայի, ինչպէս ապարդիւն՝ առանց արդիւնքի, նոյնպէս պարապ, առանց արդիւնքի։ Հետեւարդիւնքի, առանց առաջնակը կը նշանակէ բար աճապարել բառին առաջնակը աճ մասնիկը կը նշանակէ առանց գիտութեան, ուրեմն ասկէ կը հետեւի թէ ճէմ բառը հայերէն ծագում ունի, իր հետ նաև աճէմ բառը որ կը նշանակէ ագէտ ժողովուրդ։

Հոս հարկ կը տեսնենք քիչ մը պարս կամ պարսիկ բառին վրայ գրել։

Պարսիկները իրենց ֆարսի կ'ըսեն իսկ թարգմանիչները փոխանակ ֆարսի գրելու, (որովհետեւ Փ չունէինք, և Փ գրին տեղը լոդհանը պէս պէտք գործածէին), պարսիկ գրած են,

այսինքն փոխանակ Փ հնչումը գործածելու պ հնչումը գործածած են, բայց պարսկերէնի մէջ կան բառեր որ մեր բ հնչումն կը պատասխանէ, ինչպէս պարսկերէն ֆէն բառը և հայերէն բան բառը երկուքն ալ միւնչոյն իմաստը ունին. երբ այս կանոնին համեմատ երբ ֆարսին բարսի ըլլայ հայերէնով այն ատենը կ'ստուգաբանուի, բուն արերը, բայց ասիկա ժխտող բառ մը ունինք, այն է պարսաւել բառը։

39260-67 Պարսաւել կը նշանակէ նախատել՝ վար զարնել, և ասիկա հնուց ի վեր և հիմակ ալ շատ ազգեր այս բացատրութիւնը կը գործածն, իբր թէ երբ մէկը նախատել ուղեն իրենց թրշնամի կամ չսիրած ազգին անունով կ'որակին զայն։ Եւ ասոր ապացոյց շատ մը բառեր ունինք հայերէնի մէջ, որոնք կը գործածն գիմացինը գովելու կամ մեծարելու համար, ինչպէս երբ մէկը գովել կամ մեծարել ուղենք կ'ըսենք հեզ մարդ է հիանալի է, բայց երբ կ'ասենք զայն կ'ըսենք պարսաւելի է, երբ կը սիրենք կ'ըսենք արի է, բարի է, արդար է, բայց երբ կ'ատենք կ'ըսենք չար է՝ այժմ քննենք թէ ինչպէս կը կազմուի հեզ բառը. առնենք հայ բառը կազմող և հնչումը և անոր միացնենք ազն կամ ազգ բառը կազմող գ հնչումը կ'ունենանք հեզ բառը որ կը նշանակէ հայու զաւակ կամ հայուցեղ, կ'ըսենք հիանալի է երբ գեղեցիկ է, իբր թէ ըսել ուղենք հայու վայել է միայն։

Սրի, բարի, արդար բառերն ալ կազմած են իրենց ար անունն, առնենք բուն բառը կազմող բ հնչումը և անոր միացնենք ար բառը կ'ունենանք բարի բառը որ բուն արը ճիշդ արը իմաստով բառ մը։ Սրդ-ար կը կազմուի ար մասնիկէն և ահա այս բառին մէջ կը տեսնուի այն ամբողջ պարբերութիւնը զոր այս բառին ծագումն անհուն դարեր յետոյ Յիուուս արտասանեց, այսինքն ինչ որ կ'ուղեա մարդիկ քեզի ընեն, զուն աննաց ըրէ. ար եղիր գէպի ար, ահա այս է արդար բառին իմաստը սքանչելիօրէն վալեցուցած, և հակառակը կազմած են չար բառը այսինքն ոչ ար։

Ահա այս արի, բարի, արդար բառերէն կ'երեւի թէ բուն արերը հայերն էին և պարսիկ անունը հայերէնով կ'ստուգաբանուի գրալոց, գալթով ժողով ըստ մէջ մեր նախնիք իրենց ար և հայ անունները գեղացիկ եւ չափանիք հոմանիշ կը համարէին, ասոր ապացոյց է նաեւ տոնմաթուր, տոնմ կը նշանակէ աղնուական ցեղ կամ ընմաթուր, **COP** կը կազմուի տ



և հայ բառը կազմող հ հնչումէն որով կ'ստուգաբանուի հայութեան տեւողութիւնն, և այս բառին հոմանիշ դարձեալ իրենց ար անունէն կազմած են զարմ բառը որ կը նշանակէ նոյնպէս ազնիւ ցեղ։ Մեր լեզուին հ հնչումէն կազմուած կը գտնենք նաև նահատակ, նահանգ, նախարար, և հին նահայիր բառերը։

Նաև կը կազմուի նա, կամ ներկայ բառին ն հնչումէն և կը նշանակէ ներկայ հայ, այսինքն առժամանակեայ աշխարհի վրոյ ապրող հայ, ասիկա այն պատճառաւ ծագում առած է, որովհետեւ մեր նախնիք հանդերձեալ կեանքին կը հաւատային, և այս պատճառաւ իրենք իրենց հայ անունը տուած են իրեւ յաւիտեան ապրող, յաւիտեան կեանք ունեցող, և ասոր ապացոյց կրնայ համարուի կեանք բառը, զոր պիտի ստուգաբաննք այժմ և որով պիտի համկնանք նահատակ բառին գտիսար, կեանք բառը կազմաղ կ հնչումն կը կազմէ այն բարիմասար։ Կեանք բառը կազմող կը կազմէ այն բարիմասար։ Կեանք բառը կազմուի լրացուցիչ հանդամանք ունին, ինչպէս ուերը որոնք մասնակի լրացուցիչ հանդամանք ունին, ինչպէս ամբողջի մը։ Նոյնպէս կից կամ կցել կ'ըսենք երբ որ և իցէ առարկայ մը ամբողջացնելու համար բան մը կը կցենք անոր։ Առարկայ մը ամբողջացնելու համար բան մը կը կցենք անոր։ Կը նշանակէ առանց նեցուկի մնալ. կէտ կ'ըսենք օրինակի համար գծին երկու ծայրերուն, որոնք կէտով մը կ'սկսին հանեկ կէտով մը կը վերջանան, իսկ կատար, ատ մասնիկին հանեկ կէտով մը կը վերջանան, ամբողջացած կը նշանակէ իրը լրացուցիչի պէտք գամանքով ամբողջացած կը նշանակէ իրը լրացուցիչի պէտք չունեցող, ինչպէս կատարեալ կ'ըսենք երբ տունի մը չորս չունեցող, նոյնպէս կին կողմէրը շնչուած են և լրացուցիչի պէտք չունի, նոյնպէս կին կողմէրը շնչուած են և լրացուցիչի պէտք չունի, այսպէս լրացուցիչն է զոյզի մը որ այլ և կին կ'ըսումն, այսպէս կատարեալ կ'ըսենք մասն է յաւիտենականութեան։ այս կեանք բառը լրացուցիչ մասն է յաւիտենականութեան։ այս պատճառաւ նահատակ կը նշանակէ նահութենէ զրկուած միայն բայց յաւիտենականութեան մէջ պիտի ապրի իրը հայ։

Նահայիր բառն ալ որ երբեմն տուած է հայերու երկրին կը նշանակէ նահերու երկիր, իսկ նահանգ կ'ըսուէին այն չըրջանակներ որոնք նախարարի մը կը վերաբերէին, իսկ երկրին չանակներ որոնք նախարարի մը կը վերաբերէին, իսկ երկրին նահապետ կ'ըսէին։ Եւ այս նահապետ բառը որ տիրողին նահապետ կ'ըսէին։ Եւ այս նահապետ բառը որ գրեթէ ընտանիքի մը պետի իմաստով կը գործածենք միալ է ան աւելի լայն նշանակութիւն մը ունի քան ան ատենուան արքայ բառը, որովհետեւ նահապետներ ամբողջ նահերուն արքայ բառը, որովհետեւ նահապետներ ամբողջ նահերուն

պետն էին և իրենց ստորագաս ունէին նախարարներ, իշխաններ և հաներ, և հաները անոնք են զոր ցայժմ՝ կը գործածեն ասիական ցեղեր, այսինքն բան տիտղոսը։ և ասիկա մնացած ըլլալու է այն ժամանակներէն երբ հայերը նուածած էին շրջակայ ցեղերը։ Մեր լեզուին համի կ'ըսուին մեծ մայրերը, հետեւաբար հան ըսուած են մեծ հայրերը, և այս հան բառը գործածած են իրեւ ընտանիքի պետ, բայց թերեւ իշխան բառը անոր տեղը անցած է և հան բառը գործածութենէ դադրած է հայերէնի մէջ, հան բառը հայերէնի մէջ գործածուած ըլլալուն ապացոյներ են՝ հանդէս, հանձար, հանդէպ, հանզիստ բառերը։ հանձար բառը կազմող վերջի ճար ժամանիկը կը նշանակէ գիտութիւն, ինչպէս բոլոր այն բառերը որոնք ձ հնչումն կը կազմուին գիտութիւն և լոյս խմասը կուտան և հանձարեղ կ'ըսենք փորձուած և փորձառութիւն ունեցող գիտունին, և լնդհնանբապէս ծերերը և մեծ հայրերը փորձառու կը համարուին, հետեւաբար հանձար կը նշանակէ հանի խմասութիւն հանական փորձառութիւն։ դարձեալ հանդէս ծագում կ'առնէ հան բառէն և ասիկա կրկին պատճառներով։ Հանդէս կը նշանակէ մեծ կերուխում խնձոյք, և կամ ուրախութիւն կամ սուզի առթիւ արարօնութիւն մը։ Այսպէս աւելի հաներուն կը վերաբերէր խնձոյքներ տալ, կամ որ և իցէ առիթով մը հանրութիւնը հաւաքելով ուրախանապ, պարել, երգել և խօսի, և հանուր կամ հանրութիւն կ'ըսուէր հանին աղդեցութեան տակ գտնուած հայերուն կամ ժողովուրդին։

